

ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Այս տարի ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումարը տեղի է ունեցել Ֆիլադելֆիա քաղաքի հայոց ս. Երրորդություն եկեղեցում ապրիլի 28—30 օրերին՝ մասնակցությամբ 40 հոգևորականների, նախագահությամբ թեմական առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի հրավերով, վերոհիշյալ համագումարին մասնակցել են Մայր Աթոռի կողմից Լենինականի հայոց ս. Աստվածածին եկեղեցու տ. Արամ ավ. քհն. Բոյաջյանը և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Մայր Աթոռի ներկայացուցիչները, համագումարում հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույնները, ապրիլի 29-ի նիստում կարդացել են դասախոսություններ: Տ. Արամ ավ. քահանայի դասախոսության թեման է եղել «ԺԷ դարի հայ մշակույթի վերազարթոնքը ս. Էջմիածնի գլխավորությամբ», իսկ տ. Արտակ քահանան խոսել է «Քրիստոնեությունն իբրև ազատության գաղափարախոսություն» թեմայի շուրջ:

Համագումարի աշխատանքների ավարտից հետո տ. Արամ և տ. Արտակ քահանաները, առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի կարգադրությամբ, պատարագել և Բանին կենաց քարոզությամբ միսիթարել են հայ հավատացյալներին, հաղորդելով նաև Հայոց Հայրապետի ողջույնները ու օրհնությունները, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի մի շարք եկեղեցիներում, այդ թվում՝ Ֆիլադելֆիայում, Նյու-Յորքում, Նյու-Ջերզիում, Բոստոնում, Ուոտեր-Տաունում, Ուստրում:

Մայիսի 19-ին տ. Արամ և տ. Արտակ քահանա հայրերն այցելում են Կանադա: Այստեղ ևս նրանք պատարագում են և քարոզում՝ Տորոնտոյում, Մոնրեալում, և մասնակցում Սարդարապատի հերոսամարտի հիշատակին նվիրված հանդիսություններին ու այցելում հայկական դպրոցներ և մշակութային սրահներ:

Մայիսի 29-ին Մայր Աթոռի ներկայացուցիչները լավագույն տպավորություններով հրաժեշտ են առնում Կանադայի հավատացյալներից ու վերադառնում:

«Ե՛վ ԱՄՆ-ում, և՛ Կանադայում մեզ ընդունեցին ջերմորեն,—գրում են քահանա հայրերն իրենց ներկայացրած միատեղ զեկուցագրում,—և մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ազգիս Վեհափառ Հայրապետին, ինչպես նաև ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին, որոնց բարեհաճ կարգադրությունները մեզ շատ գեղեցիկ պահեր շնորհեցին, որոնք միշտ կմնան մեր հիշողության մեջ...»: